ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մարտի 2015թ. թիվ 69-Ա

«ԱԳԱՐԱԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԵՐԱՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 15-ի «Գյուղական բնակավայրերում գործող առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմակերպելու մասին» թիվ 41-Ա որոշման, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» և «դ» ենթակետերով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել «Ագարակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի վերակազմակերպման արդյունքում ստեղծված «Ագարակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի և փոխանցման ակտը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 126 հոդվածը՝ «Ագարակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար վերանշանակել Սուսաննա Մամաջանյանին:

3. Ս.Մամաջանյանին՝

Ապահովել «Ագարակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետական գրանցումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. մարտի 10
ք.Վանաձոր